

ԼԵՒՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Առաջին հանրային տարածքները¹ Հայկական լեռնաշխարհում ի հայտ են գալիս դեռևս Ք.ա. Գ. հազարամյակում եւ կապված են քաղաքային բնակավայրի առաջացման հետ: Քաղաքի առաջացումը ի սկզբանե ունեցել է հասարակական նպատակ: Խ. Օրտեգա ի Գասետի կարծիքով՝ «Քաղաքը չի հայտնվում խրճիթի եւ տան նման, որ պատուպարվեն վատ եղանակից, երեխաներ մեծացնեն եւ այլ ընտանեկան հարցեր լուծեն: Քաղաքը նախատեսված է հասարակական գործեր իրականացնելու համար... Այն սկիզբ է առնում դատարկ տեղից՝ հրապարակից, շուկայից, Հոռմի ֆորումից, Հունաստանի ագորայից, իսկ մնացածն ընդամենը հավելումներ են, որոնք անհրաժեշտ են այդ դատարկությունը սահմանազատելու, շրջակա միջավայրից այն անջրպետելու համար»²:

Սույն հետազոտությունը նպատակ ունի քննարկելու հանրային տարածքի, մասնավորապես հրապարակի խնդիրը հնագույն Երեւանի օրինակով, որտեղ նման միջավայրեր տեսանելի են արդեն վաղ բրոնզի դարաշրջանի (Ք. ա. մոտ 3500-2500 թթ.) բնակավայրերում³: Մասնավորապես՝ Երեւանի տարածքում գտնվող Շենգավիթ հնավայրում, որը կարելի է դասել վաղ քաղաքի շարքին, առկա է կանոնավոր հատակագիծ, տների խմբավորում փողոցի երկու կողմերում, նույնիսկ պարզորոշ է արհեստավորական թաղամասի առկայությունը: Բնակավայրը պարսպապատված

¹ «Հանրային տարածք» հասկացությունը սույն հոդվածում օգտագործվում է հետեյալ բովանդակությամբ. ընդհանուր օգտագործման՝ բաց, անկտուր տարածություն, որը մասնաձեռք է տարբեր մարդկանց՝ անկախ նրանց խմբային (ազգայնական, սոցիալական, մասնագիտական) հատկանիշներից:

² X. **Ortega-i-Gasset**, Восстание масс, Москва, 2002, с. 143.

³ Ա. Գնունի, Հայաստանում քաղաքագոյացման հիմնահարցի շուրջ, «ՎԷՄ», 2010, էջ 100. տե՛ս Մ. Գաբրիելյան, Ա. Գալոյան, Ա. Գնունի, Պարիսպը եւ հրապարակը՝ գործառնականի եւ սիմվոլիկի միասնություն, «Երեւան, գիտական հոդվածների ժողովածու», Երեւան, 2006, էջ 48:

է, առկա են պաշտամունքային կառույցներ⁴: Գուլքային տարբերությունները վկայում են շերտավորման գործընթացի մասին⁵: Սա քաղաքի առաջացման համար կարեւոր նախապայման է, որովհետեւ երբ որեւէ խումբ տարաբաժանվում է, առաջանում է ընդհանուր տարածքի ու հաղորդակցական կենտրոնի կարիք: Հաղորդակցություն առիթը կարող է լինել ծեսը կամ ապրանքների փոխանակությունը: Շենգավիթ բնակավայրի կենտրոնական հատվածում տեղադրված է եղել մոնումենտալ բնույթի շինություն, որը, հավանաբար, պաշտամունքային նշանակություն է ունեցել⁶: Ծիսակատարությունների համար օգտագործվել է նաեւ երկու բնակարանային համալիրների միջեւ գտնվող տարածքը⁷: Այս բնակավայրը կարող էր տարածվել նաեւ պարիսպներից դուրս եւ միայն իր անկման շրջանում պարփակվել պարսպապատ տարածքում⁸:

Հրապարակի գաղափարն ավելի տեսանելի է Վանի թագավորության շրջանի երեւանում՝ Էրեբունի եւ Թեյշեբաինի (Կարմիր բլուր) քաղաքներում: Էրեբունիում այն գտնվում էր միջնաբերդում, որի հարեւանությունը տեղադրված էր սրբավայր-տաճարը: Հրապարակի մյուս երկու կողմերում են պալատական ու զինվորական շինությունները: Հրապարակը, ամենայն հավանականությամբ, ծառայել է կրոնական ու զինվորական հանգիստությունների համար: Քաղաքը տարածվել է նաեւ միջնաբերդից դուրս՝ բլրի լանջին, սակայն այն ուսումնասիրված է մասնակիրորեն. բլրի շուրջ կառուցված շինությունները, հիմնականում հում աղյուսից լինելու պատճառով, գրեթե չեն պահպանվել, բացի այդ, երբեմնի հսկա քաղաքատեղին այսօր կազմում է Նոր Արեշ եւ Վարդաշեն թաղամասերի անբաժանելի մասը⁹:

Թեյշեբաինի հրապարակներից մեկը գտնվել է միջնաբերդի տարածքում, մյուսը՝ բուն քաղաքում¹⁰, որը նույնպես պետք է ծառայեր

⁴ Ա. Բորոխյան, Քաղաքագոյացման գործընթացները նախաուրարտական Հայաստանում (պարբերացման փորձ), «Բ. Բ. Պիտրովսկին եւ հնագիտությունը», Երևան, 2014, էջ 46-47:

⁵ Հասարակության սոցիալական շերտավորումը եւ կառավարչական ապարատի առկայությունը քաղաքի գլխավոր հատկանիշներից մեկն է: Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթի հուշարձաններում հասարակության սոցիալական շերտավորման մասին հմտ. Ա. Գնունի, նշվ. աշխ., էջ 109:

⁶ Ա. Գնունի, նշվ. աշխ., էջ 103:

⁷ Անդ, էջ 102:

⁸ Հ. Միմոնյան, Շենգավիթի դամբարանադաշտը, «Հին Հայաստանի մշակույթը», պր. 14, Երևան, 2008, էջ 86-87:

⁹ К. Оганесян, Крепость Эребуни, Ереван, 1988.

¹⁰ Հ. Ավետիսյան, Ա. Բորոխյան, Ուրարտուի հնագիտություն (Ամրոց-բնակավայրեր եւ դամբարանային համալիրներ), Երևան, 2010, էջ 30:

կրոնաձիսական նպատակների համար: Քաղաքի տարածքում գտնվող հրապարակի գործառույթների մասին դժվար է հստակ խոսել: Այստեղ պաշտամունքային կառույց չի հայտնաբերվել: Քաղաքը յուրահատուկ է նրանով, որ պարսպապատված է: Այն կառուցվել է ըստ նախապես մշակված հատակագծի, ունեցել է երկար եւ լայն փողոցներ, որոնց երկու կողմերում տարածվում են բնակելի թաղամասերը: Հետագոտված թաղամասերը կազմված էին ոչ թե առանձին տներից, այլ՝ շենքերից, որոնց մեջ ընդհանուր տանիքի տակ գտնվում էին մի քանի բնակարաններ¹¹: Թեյշեբաինի քաղաքը ունեցել է մոտ 150 հա մակերես, կառուցվել է միասնական հատակագծով, ունի հստակ ընդգծված հրապարակ, փողոցներ եւ թաղամասեր: Քաղաքը պաշտպանված է հզոր՝ երեք մետր հաստությամբ պարիսպներով եւ որմնահեծերով: Քաղաքում ապրել են թագավորական ընտանիքի անդամները, վարչական աշխատողներ, հարկատու բնակչությունը, որոնց թաղամասերը առանձնացված են եղել միմյանցից¹²:

Ինչպես ասվեց, պարզ չէ, թե Թեյշեբաինի քաղաքային հրապարակը որոշակի ինչ նպատակների է ծառայել: Վանի թագավորությունում ողջ տարածքում պեղման են ենթարկվել հիմնականում ուրարտական կենտրոնների միջնաբերդերը, ավելի քիչ՝ քաղաքային բնակատեղիները, որի հետեւանքով մեզ առավել ծանոթ է ուրարտական վերնախավային, քան զանգվածային մշակույթը¹³: Կարելի է ենթադրել, որ քաղաքային հրապարակն օգտագործվել է ոչ միայն վերնախավի կողմից, ինչպես միջնաբերդերի հրապարակների (Էրեբունի, Թեյշեբաինի) պարագայում է: Այն ունեցել է թաղամասերը բաժանող գործառույթ, հնարավոր է, որ այստեղ նաեւ առեւտուր է ընթացել, այսինքն՝ դրա ածանցյալ գործառույթներից մեկը տնտեսականը կամ շուկայական է եղել: Մասնավորապես Թեյշեբաինի քաղաքի տարածքում պեղվել են արհեստանոցներ եւ արհեստավորական տարատեսակ արտադրանքներ, ինչպես նաեւ գյուղատնտեսական մթերքների մնացորդներ: Հ. Մարտիրոսյանը նկատում է, որ արհեստները զարգացած են եղել ոչ թե միջնաբերդում, այլ՝ բուն քաղաքում¹⁴: Մակայն պնդել, թե հրապարակը հաստատապես ծառայել է առեւտրի նպատակներին, դժվար է, հատկապես, որ հնագիտական նյութը հիմք է տալիս կարծելու, թե արհեստավորական արտադրանքը ստեղծվում էր գլխավորապես պատվերով: Քաղաքի պեղումները թույլ են տալիս ենթադրել,

¹¹ Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва, 1959, с. 200.

¹² Հ. Ավետիսյան, Ա. Բորիսյան, Ուրարտուի հնագիտություն, էջ 83-84:

¹³ Անդ, էջ 30:

¹⁴ А. Мартиросян, Город Тейшебаини по раскопкам 1947-1958 гг., Ереван, 1961, с. 95.

որ դրա բնակիչները սեփական տնտեսությունն չեն ունեցել եւ ապրել են պետական միջոցների հաշվին¹⁵: Պեղումների ընթացքում չեն բացահայտվել նաեւ գյուղատնտեսական մթերքների պահեստներ կամ անասունների համար նախատեսված շինություններ, ինչը թույլ է տալիս կարծել, թե բնակիչները չեն ունեցել սեփական տնտեսություն¹⁶: Այսինքն՝ շուկայական փոխանակության համար բավարար հիմքեր չկային: Առեւտրի մասնակի ծավալումը հնարավոր էր միայն դրսից ներկրված ապրանքների շնորհիվ: Քաղաքային հրապարակը պարզապես կարող էր ծառայել որպես փոխադարձ ճանաչողության տարածք, ընդ որում՝ միջխմբային ճանաչողության նպատակների համար: Քանի որ բնակչությունը պարսպապատ քաղաքում համեմատաբար փոքրաթիվ էր¹⁷, պարիսպների պատճառով դրսեկների մուտքը սահմանափակված էր. մնում է ենթադրել, որ հրապարակը, ինչպես նշվեց վերը, գլխավորապես ծառայել է ծիսական նպատակների համար: Այս տեսակետն ավելի է հիմնավորվում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ, ինչպես քաղաքի անվանումն է վկայում, այն կառուցվել էր ի պատիվ ուրարտական երեք գլխավոր աստվածություններից մեկի՝ Թեյշեբաի: Էրեբունի հնավայրի կենտրոնում եւս տեղադրված է կրոնական շինություն՝ Խալդի գլխավոր աստվածության տաճարը: Նույն երեւոյթին կարելի է հանդիպել ուրարտական շրջանի բազմաթիվ այլ քաղաքներում¹⁸:

Քննվող ժամանակաշրջանում մարդիկ քաղաքային բնակավայրերում ու դրանց շուրջը հավաքվում էին՝ առաջին հերթին անվտանգության եւ ապահովության նպատակներից ելնելով: Քաղաքի ռազմավարական դիրքը, քաղաքը եզերող կառույցները՝ պարիսպները, բնականաբար, կարեւոր դեր էին խաղում: Մյուս կողմից քաղաքի հովանավոր աստվածության գոյությունը ապահովում էր հոգեւոր անվտանգությունը: Բացի այդ, գլխավոր աստվածությունը եւ նրա պատվին կառուցված տաճարը կարեւոր հաղորդակցային գործառույթ ունեին: Հրապարակում տաճարի կամ այլ սրբավայրի առկայությունը ենթադրում է, որ այստեղ կատարվել են ծեսեր, որոնք ունեցել են կարեւոր համախմբող նշանակություն: Վաղ բրոնզի դարի, հատկապես Վանի թագավորության ժամանակաշրջանի

¹⁵ Б. Пиотровский, Кармир блур I, Ереван, 1950, с. 18.

¹⁶ Անդ:

¹⁷ Որոշ հաշվարկներով ուրարտական քաղաքների բնակչությունը չէր անցնում մի քանի հազարից. տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, խմբ. Ծ. Աղայան եւ ուրիշներ, Երևան, 1971, էջ 354:

¹⁸ Անդ, էջ 400:

քաղաքային բնակչությունը բնորոշվում էր խայտաբղետ ենթակառուցվածքով¹⁹, սոցիալական, մասնագիտական կառուցվածքով, որոնք մեծ մասամբ բնակչության էին հաստատում թաղերով²⁰: Հրապարակը ու դրա կենտրոնում կանգնած հովանավոր աստվածությունների տաճարը այն ընդհանուր վայրերն էին, որոնք նրանց միավորում էին նույն քաղաքի տարածությունում մեջ²¹: Հրապարակի պաշտամունքային կամ կրոնական գործառույթը այն գործոնն էր, որ ապահովում էր քաղաքում բնակվող տարբեր խմբերի հավասարությունը եւ երկրորդում սոցիալական, էթնիկ, մասնագիտական տարբերությունները, որոնք կարող էին խոչընդոտել միասնական հանրությունը զգացողությանը: Նկատի ունենալով նշվածը՝ քննվող ժամանակաշրջանի քաղաքային հասարակությունը կարող ենք պայմանականորեն անվանել կրոնաօրհասական հրապարակի հանրություն:

Ուշագրավ է, որ Թեյշեբախիի արհեստանոցների եւ կացարանների մեծ մասի դռներն ու պատուհանները բացվել են դեպի բակերը, այսինքն՝ եղել են խուլ: Սա ենթադրում է, որ փողոցի կամ դրսի (հանրային) կյանքի նկատմամբ հետաքրքրությունն չի եղել: Փողոցները հիմնականում անցնելու համար են նախատեսված եղել: Դրանցում մայթեր չկան, իսկ լայնությունը լավագույն դեպքում չի անցել 6 մետրից²²: Մոտավորապես նման պատկեր է առկա նաեւ Շենգավիթ բնակավայրում: Այսինքն՝ հանրային միակ տարածքն այստեղ եւս հրապարակն է, որտեղ բնակիչները հաղորդակցվել են գլխավորապես կրոնաօրհասական միջոցառումների պատրվակով:

РЕЗЮМЕ

Первые открытые и доступные для межгрупповых коммуникаций публичные пространства появляются в городских поселениях, в частности в 3-2-ое тыс. до Р.Х. Единственным видом публичных пространств, изучаемых в данном временном промежутке, являются площади, которые служили как пространство для объединения городской публики. В границах нынешнего Еревана были раскопа-

¹⁹ Ասդ, էջ 344, 354:

²⁰ Թեյշեբախիում բնակելի տների տարբեր տեսակների առկայությունը վկայում է տարբեր սոցիալական խավերի գոյության մասին (Ա. Մարտիրոսյան, Город Тейшебаини, Ереван, 1961, էջ 131-155):

²¹ Տարբեր աստվածություններին նվիրված պաշտամունքային կառույցներ են պեղվել նաև Տուշպայի, Արգիշտիխիսիլի կենտրոնական հատվածներում (հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 400):

²² Կ. Օգանեսյան, Кармир блур IV, Ереван, 1955, с. 14-15.

ны площади в городищах Шенгавита, Эребуни и Тейшебаини. Учитывая то, что в большинстве площадей изучаемого времени были раскопаны религиозные и культовые здания (помещения), можно предположить, что главной идеей или объединяющим фактором общества была религия. Это засвидетельствованно также зафиксированием конкретных мест (помещений) поклонения.

SUMMARY

The first public spaces which were open and appropriate for interpersonal communication were established in the urban areas during the 3rd-2nd millennia BC. In the period of study the squares were the only type of public areas serving as gathering places. Within the boundaries of nowadays Yerevan squares have been excavated in the sites of Shengavit, Erebuni and Teishebaini. Taking into consideration the fact that in the most of the sites/squares of era under review religious and cult constructions/buildings were excavated, we can assume that the original community uniting idea was the religious one.

